

Ա. Ներքին ԲԱԺԱԿՆ.

Ակիհին մէջ տեղաւորեալ ներքին բաժակն բաղկացեալ է անարուեստ և անյար բարեալ արծաթեայ մետաղից և առանց ո և է զարդարանաց, առ որ Ակիհին մայր բաժակն ծառայում է որպէս պահարան։ Դր. Այսըն, իւր Մենագրութեան մէջ (Հատոր Ա.), նուիրում է երկու մասունք, նախ՝ սորին մանրամասն նկարազրութեանն (Part VII, էջ 131-136) ապա՝ արուեստին և աւանդութեանցն (Part X. էջ 159-174). Արդեօք, ի՞նչ էր պատճառն որ այսպիսի մի հասարակատեսիլ և արուեստազորեկ բաժակ քաջ պահարանելոյ նպատակաւ, Առացելոց ոմանց գեռ կէնդանութեան ժամանակ պատրաստեցաւ այդպիսի մի սբանչելագործ Ակիհ, որպէս պատուական մասնատուփ կամ պահարան, որ, ըստ արժանահաւատ Հեղինակին որպէս և քննաղատից, ամենազեղեցիկ նշանը մի է թէ՛ ըստ պրազնութեանն, թէ ըստ գեղարվեստին, և թէ ըստ սոսուերական խորհրդանն, Յայտնի է որ Հմուտ Հեղինակին նշանարան էր Festina Lente։ Նա չշտապեցաւ իւր ծանրաշինատ զննողութեանց մէջ, որով և իւր հաստատամիտ եղակացութիւնն այն եղեւ, թէ այդ ներքին բաժակն պէտք է լինի ոչ թէ արդինց երեակայական ընդունելութեանց այլ, իրօք, նոյն իսկ Սուրբ Թասն («Holy Graal») կամ Ըմանակն որ Գրիսոսոս զործ ածեց յընթացս վերջին ընթրեաց, ի անօրինութիւն Սուրբ Հաղորդութեան Խորհրդոյն։

Ի վերջ բանիցս, պարտ անձին համարիմ յայտնել որ նոյն Յօդուածոյս հետ հրատարակեալ երկու պատկերաց (այսիցն, The Great Chalice of Antioch, և The Diagram of the Chalice) ընդորինակութիւն նուրդովիի վերապահնեալ է կուլակի Եղբարց, ի նիս Եօրէ։

Ս. ՏԵՐ Մ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՍՊԱՀԱՆԻ ԶԱՐԱՐՄԱԿԱՆ ԳԱԽԱԾ

(Ապուբեկան - Պատմական առաջնախորհրդին)

(Շար. տես Բազմ. 1924, էջ 233)

Ը

Բնատանեկան բարեց ու սովորութիւններ և այլ հետեր. — Ընտանիք. — Ծագարեց և կնունց. — Ծնունդ օրնեւէ, կնունց, բառասանց, օրորոց, ամութիւն, անուններ. — Մասունկների զաստիքարակութիւն. — Ամունութիւն և հարսանից, հասակ, բաշիքարթիւն, աղջիկ ուզել, նշան զնել, հարսատես, փեսատես, նէքններ, հարսանիք բաժանանմերը-բարդաց կարեց, շասածվէն, նշան օրնեւէ, ծառ գովիէ, հաւազլուփ. — Այսին նշանազրութիւնն ու պահպառութիւնը. — Ծանոնդաթիւն և բժշկութիւն. — Մաս, Բաղութ, մնուեց. — Գերեզմանատուն։

Բնետանիք. — Սրանից 50-60 տարի առաջ Զահարինալի ընտանեկան կիանքն իր ներքին կազմակերպութեամբ եղել է իսխստ նահանգատական գիւղացիներն ապրելիս են եղել մնձ գերատատաներով, 50-60 հոգով։ Սակայն ժամանակի ընթացքում գերդաստանները քայլայել են և հին, նահապետական սովորութիւնները, վարք ու բարփերն անհետացել. այսօր ոչ միայն 5(1)-6(2) հոգուց բաղկացած գերդաստաններ չկան, այլ և 15-20) հոգուց կազմված ընտանիքներ հազիւ երկու, երեք գերեբում զոյլութիւն ունին։ Այդ հանգամանքը պիտի վերագրել նախ գիւղացիների տնտեսական գրութեան, և երկրորդ՝ հին և նոր սերնդի հայեացքների տարբերութեան։

Քայլայող նահապետական գերդաստանի մէջ մնձ հայրը տան գլխաւորն է, որ առանձին յարագանք ու պատի է վայելում ընտանիքի անդամներից։ Նա կատարելապէս տէր է գերդաստանի բոլոր իրաւունքներին և ստացւածքին։ Առանց նրան համաձայնութեան ոչ մի կարգագրութիւն չի մնում։ Նա է որոշում իր որդիների աշխատանքները և հոգում նրանց ծախսները. մի խօսք նա կառավարում է ընտանիքը և նրա շահերը պաշտպանում ինաների ու զատարանների առաջ։

Հօր մահից յետոց ընտանիքի կասավարութեան դեկին անցնում է գերդաստանի աւագ անդամն (կան ծնողներ, որ հէնց իրենց կենգանութեան ժամանակ ընտանիքի զեկավարութիւնը յանձնում են մնձ որդուն և իրենք հանգստանում), սակայն նրան իշխանութիւնն ու իրաւունքները

սահմանափակում են. Նա ընտանիքան ծանրակարգ իր խնդրիներում խորհրդակցում է իր եղայրների հետ և նրանց համաձայնութիւնն է սուանում: Բայց ընդհանրապէս նոր մահից յնույն եղայրները բաժանում են միմանցից և առանձին ընտանիք կազմում:

Ընտանիքի սինհը մամբ կամ նան է. Նրա ձեռուում է զունում տան զեկը, որով նա ընթացք է տալիս նահապետական օջախին: Նա իր անխոնջ աշխատութեամբ բարի օրինակ է հանդիսանում հարսներին ու աղջկներին: Նրա անմիջական իրաւութեան տակ են զունում տան բոլոր բանալիներն ու պահարանները և առաջ նրա թոյլուութեան ոչ ոք իրաւունք չունի մի բան վարսներու: Նա է հերեւին սեղան պատրաստում, բանուրներին կիրակում է հարսների, աղջկների ու թռոների ծախսները հոգում: Դոյմիչն նա է որոշում իրաքանչիւր հարսի պարականութիւնը, աշխատանքի բաժինը և կարգադրութիւններ անում: Հոգում է աշխատանքի վրայ և հետեւում, որ բոլորն էլ իրար հետ սիրով լինեն: Հարսները թէն յարգում են նրան և ամենայն հնագանդութեամբ կատարում նրա հրամանները, բայց չեն ենթարկում նրա ճնշումներին և իրենց իրաւունքների մէջ ազատ են նաևում: Սակայն երբ հարսները մէկը սիրալ է գործում, նա յանդիմանում է, սախատում և շտան անդամ հայեցում, իսկ ծայրայի դէպատմ' զանգատում է որդուն. սա էլ ծեծում է կնոշը, եթէ նոյն ի սրբ նա անմող է: Ալսիփիս հնագամանքում հարսը յուսահաւաք դիմում է հօրանցը և իր զիմանի մասին զանգատում, բայց նրանք ոչ միայն չեն լսում նրան, այլ և նախառուղի յեն են ուղարկում, պատճառաբանելով, թէ հարսը պէտք է ամօժխած և համբերատար լինի:

Դանը իրեն խորհրդակից ունի մնե հարսին, որին նա սովորեցնում է տան կառավարութեան ձևը: Կերորջ մահից յետոյ նրան է անցնում տան զեկը, բայց նա մնող է վարւում հարսների հետ և շտանդիմներում դիմում է սկիսրայրին կամ իր ամտանու փորհրդին:

Հարսը տան բոլոր անդամների՝ սկեսրայրի, աէքրիդի հրամանները պիտի կատարէ: Նա նահապետական օրէնքի համաձայն մինչև իր կեանքի վերջը իրաւունք չունի նրանց հետ խօսելու: Իր միտքը նա յայտնում է դէմքի և մարմնի շարժուեւերով կամ տան երկիրաներից մէկի միջոցով: Դոյմիչն նա իրաւունք չունի տղամարդկանց հետ և սուելու և կիրակուր ուսելու:

Առնասարակ Զահարմանալում կանայք տղամարդկանցից առանձնացած են ապրում և տեղական սովորութեան համաձայն առանձնանալու են ճաշում:

Խնդպէս ֆէրիայում, այնպէս էլ Զահարմանալում հարսների աշխատանքները բաժանած են, այսպէս՝ աւագ հարսը զարթնում է տաւաւուեան շտափանակ չափ խմոր հնցում, հաց թխում, կերակուր եփում, խնոցի հարում: Երկրորդ հարսը նոյնպէս առաւուեան շտափ վաղ ենում ալիք է մազում, թռնիք վասում, կովերն ու ոչխարները կթում, լւացք անում, կարում, կարկատում: Երրորդ հարսը տունն է աւելում, նաև խարակ պատցնում, թել մանում, գորգ կամ կարպետ քրծում: Ամենափոք հարսը կ աղջկը լուսադէմին և երեկոյեան աղիւրն են իշում, ջուր եփում, անկողինները հաւաքում, տան անդամներն ծախսում, կիրակուր մատուցանում, սեղանը հաւաքում: Բայց հարսների աշխատանքները դրանով չեն վերջանում. բացի տանյին գործերից՝ նրանք օգնում են նաև իրենց ամուսիններին գաշտային աշխատանքների մէջ: Տան աշխատակինները վերջացնելուց յիսոյ նրանք իշում են զաշոր և կալը մազում, շտափ քում, ցորեն մաքրում: Այդ գեր բաւական չէ. Նրանք ուշ երեկոյեան յոզնած սուն են վերագանձնում և տայարակունց համար կիրակուր պատրաստում, և մինչդեռ տան բոլոր անդամները պատկում են նրանք գանգում և կար անում: Այսպէս Զահարմանալում կանայք դասապարտուած են չալփառ աշխատանքի: Ընդհանրապէս նրանց գործեինքն մի տիտուր և ցաւալի պատկեր է ներկայացնում:

Զահարմանալում աւանդական սովորութեան համաձայն ամուսինն իր կնոջ անտոնը չի տալիս, այլ զանազան ձեկուով է կոչում նրան, ինչպէս օր. «քայ, օյ, օնօ՛», քու հէտ էմ հա, տես ինչ եմ ատում»: Դոյմիչն կինն իր ամուսնու անունը չի տալիս, երբ ուզում է կանչել նրան՝ մնե որդու անունն է տալիս, օր. «Գրիգորի աղեղը», իսկ ուրիշների մօն խօսելիս՝ ասում է «ինքը», մարդ էլ կնոջը կոյում «մեր խիզանը»:

Ընթանիքում գործածում են առ հասարակ հետեւալ անանակոչութեարը. ամուսինն իր կնոջ հօրն անւանում է «անեօր», կնոջ մօրի՝ «զօնքաչ», կնոջ եկրօրը՝ «աներագ», կնոջ քրոջը՝ «քէնին», կնոջ քրոջն ամուսնուն՝ «քաջանազ»: Կինն իր ամուսնու հօրն անւանում է «կէսրար», ամուսնու մօրը՝ «կէսուր», ամուսնու եղբօրը՝ «տալ», ամուսնու քրոջը՝ «տալ», ամուսնու:

եղրօր կոչը՝ «աէզէրկին»։ Եյթիան՝ մեծ հօրն կոչում է «պապ, պապա», մեծ մօրը՝ «մամ, մամա», հօրը՝ «ազիզ, բաբա», մօրը՝ «նան, նանա», հօրեղբօրը՝ «ամիր», հօրեղբօր կոչը՝ «պանդիդ» (իթէ երիտասարդ է), «արս, հարսի» (իթէ երիտասարդ է), եղբօրը՝ «ախպէր», բրոջը՝ «բուքուրում», մօր եղօրը՝ «քէփի, դայի», մօր եղբօր կոչը՝ «քէպէկին», հօրաբրուշը՝ «հօրաբրուր», հօրաբրոջ որդուն՝ «հօրգորոզիի», մօրաբրոջը՝ «մօրգուրուր», մօրաբրոջ որդուն՝ «մօրգուրուր ողին», կիպահօրը՝ «քաւոր», կիպահօրը՝ «քաւորին». հօրեղբօր զաւակները միմանց կոչում են «ամուշա»։

Ցդարենիք կ. կինունք. — Զահարմահալում երը մի կին յդի է լինում՝ ասում են «ոտք ծանդր է»։ Նա ծննդեան մի ամիս մնացած մասր աշխատանք չի կատարում և անպայման տալիս են նրա ցանկացած ուտելիք և խմիլքները։ Երբ մօռտենում է երկունքի օրերը՝ զնում է եկինքի և հաղորդում, որպէս զի երեխան հետառթեամբ ծնի և իթէ ծննդաբերութիւնը մահափիթ լինի՝ անհատոր չմնոնի։

Երբ սկսում է երկունքը՝ կինը յայտնում է, որ ինք «ցաւ է»։ իսկոյն նեռացնում են նրան զերդատանի միւս անդամներից, մի ասանձն սննդեակ, կանում ատամորոց և 8-10 մասիկ ազգական կանանց, որպէս զի տատօմորը օգնեն։ Առվորացար երկունքի ժամանակ ծննդկանը երկու կանանց զօտիներց կամ մէջքերց բռնելով գետնի վրայ չոփում է կամ պազում։ Իթէ ծնունդը ծանրանում է, ազգական կանայք սկըսում են ազօթել.

Եա՞ սուրբ Կուս

Մէր-Մարմամ Ասուածածին,

Դու հաննես էս ծնըտկնի ատենին։

Կամա

Լի՞ սուրբ ատենահաս Ասուածածին,
Դու ազատէ.

Մեր յոյսը գու ես,

Մեր բժիշկը գու ես,

Մեր խելքը ոնչինչ չէ Կորում,

Դու հաննես մեր ծնըտկնի ատենին։

Եւ կամ՝

Ատենահաս սուրբ Տիրամէր,

Հաւում ես,

Ծովում ես,

Քանց էս նեղ տեղ էլ կայ,

Համա էս տեղ էլ մէ հասուի։

Երբ երեխան ծնում է, անմիջապէս լողացնում են, աղում, պորտը կտրում, յետոյ խան-

ձարուրի մէջ փաթաթելով՝ դնում ծննդկանի աջ կողմը, իսկ նրա բարձի տակ գնում են մի դանակ կամ մի երկաթ, որպէս զի չարերը երեխան չփոխեն կամ չսպանեն։ Ապա ընկերող թաղում են տան բակի մի անկինում, իսկ ընկած պորտը տալիս են հորթին, որ երեխան և տապասէր» լինի։ Այսուենետե սկսում են ինամել ծննդկանին։ Նրան 5-6 օր շարունակ տալիս են ուտեն նաբախով բրշտուք, որի մէջ ածում են կոչ, զաշին, մայեանայ և այլն։ Ճիր փոխարէն խնցնում են զինի կամ «նաբախթզալ», իսկ երեխային կերցնում են, միայն մի օր, իւղով խառնած շաբար։

Իթէ ծնւածը տոյս է, շատ են ուրախանում և ասում. «աչկեներդ լուս, բարով կապէք կարմիրը», իսկ տան հարսները խլում են հօր զդակը և աշբալուս տալիս, հայրն էլ նրանց 1-2 դրան փող է նւիրում։ Իթէ ծնւածն ազդիկ է, այնքան չեն ուրախանում, ոչ էլ հօր գգակն են խլում, այլ միայն ասում են. «աչկեներդ լուս, բարով կապէք կանաչը»։

Երեխան ծնելոր մէկ երկու ժամ անց ծննդշկան ազգականներն ու հարեանները լինորհաւառութեան են զալիս, իրենց հետ բերելով բրշտուք, ծածենզ, հաւայ, շանդ, զոնցոց, չիթ, թաշկենակ, արինալուզ և այլն։ Գալիս է նաև սանամայրը, իր հետ բերելով արժեքաւոր մի նւէր։ Տնեցիները հիւրերին հիւրափետում են թէյով և չամիշով։

Դիունկ օրնենի. — Դիունկից 4-5 օր յետոյ հրափետում են մօտիկ բարեկամ՝ ազգականներին և քահանային. վերջին օրնում է ծընունդը և իրին նէր ստանում մի զոան փող և մի աման չամիչ, որ տեղական բարառով կուտում է «փառքի բարեկամ»։ Այսուենետե թէյով հիւրերիում են հիւրերին։ Աւելին օր յետոյ ստամայրը զնում է տուն՝ ստանալով մի թոււման փող կամ մի հատ օճառ, մի աման ձաւար, բինձ, աղ և 2 զան փող։

Կին: նէր. — Դինդաբերութիւնից 6-8 օր յետոյ կատարում են մկրտութեան հանդէսը։ Գալիս է տատմայրը, «լողցնում» երեխային, ապա լուր է ուղարկում քահանային և քաւորին, որ եկեղեցի զան մկրտութեան խորհուրդը կատարելու։ Դրանից յետոյ նա երեխային զրկած գնում է եկինքից, ուր քիչ յետոյ զալիս են քահանան, քաւորը և մի քանի ազգական կանայք։ Երեխայի հայրն իրաւոնք չունի մկրտութեան խորհրդին ներկայ գտնւելու։ թէ ինչո՞ւ, յայսոն չէ։

Մկրտութեան խորհրդից յետոյ քահանան երե-

իսան գնում է քաւորի քաղուկների վրայ և ինքը շուրջառը ծածած, «լիրազիմ» շարականը երգելով՝ գնում է ծննդկանի տունը, ուր արդէն հաւաքած են լինում ծննդկանի մօտիկ ազգականները և հարևանները: Ճանապարհն ով որ տեսում է երեխային, համբուրում է, որպէս նոր օւժած: Եթե տուն են հասնում հրամիրաւաները կարգով համբուրում են երեխային, իսկ ծննդկանը զիմին մի քոյ ձգած՝ առաջ է ազլիս, համբուրում երեխային, ապա առնում է քաւորի ձեռքից և քահանայի առաջ շրտում, մինչև որ նա աւարտում է աւետարանը Այսուհետև հրամիրածները չնորհաւորում են երեխայի մկրտութիւնը և աշքալուս տալիս: «Աչիններդ լուս, հրագոր տարեկան ընթի» ասելով, իսկ երեխայի հայրը համբուրում է աւետարանը և քահանային երեսու զուն խաչահամբոյը տալիս: Դրանից յետոյ հրամիրածները հրամափրում են թէյով, ապա նախ տղամարդիկ է յետոյ կանայք ճաշում են: Սովորաբար ճաշին տալիս են վլաւ, եախնի և մնոր:

Քառասութեք. — Կորածին երեխայի մայրը մինչև 40 օր բրդիկ ման չի զախս, որպէս նույն աղբաւում է անապէս նայ չի թխում, նմոր չի անում, աղբիւր չի գնում չուր բերելու, որովհետև ձեռքբրդ պահով» են համարում: Իսկ եթե պատահում է, որ մօտավայ հարմանի տունն է զնում, զիմին ալիւր են ածում և եթէ տոյս է ծննդ ասում են, «ուրախ քառասունք գուս զաս, Աստուած պահի», իսկ եթէ աղջիկ է ծնել՝ «քարով տղի քառասունք զոս զաս»:

Քառասուն օրից յետոյ մայրը երեխային դընում է «օրօց»ի մէջ, ապա մի վառ երազ դնում օրօրոցի տակը, որպէս զի երեխայի տան օջախը միշտ վառ մնայ, չորս հաց էլ գնում է օրօրոցի ձոդի վրայ, որպէս զի «գուլզով» լինի, այսինքն երեխան միշտ հաց ունենայ, իսկ մի ակից էլ դնում է նազիք մօտ, որ «բարին մօտ ըլնի և չարը հնառու»: Այսուհետև մի հաց է զնում ծոցը և աղբիւր իշխում չըրի. ճանապարհն հանդիր, պած կնոջը հացից մի պատառ տալիս է ասում: «Բարով, քեզ էլ ոփի ըլնենայ», որին պատասխանում են: «Ուրախ քառասունքից գուս զաս»:

Պայցը սովորաբար երեխային մէկուկէ կամ երկու տարի կաթ է տալիս: Ծծից կտրելու համար թիթիւն կամ մուր է քսում և կամ բուրդ փաթաթում: իսկ չար աչքից, նիմադից հնառ պահելու համար գունաւոր ուլունքներ է կափում վզից, կամ աջ ուսի շորի վրայ կարում է մի կապոյտ ուլունք:

(Պորոց: — Զահարմանացի երեխան քնում է «օրօց»ի մէջ, ոս ցածից շորս կիսազեղինածն փորբիկ սափերով և վերևից հորիզոնական ձոդիկով և երկու կամարներով աղեղնաւորուած փայտէ շինածեր է, որի մէջ գնում են փոքր բարձրկով բոփի (անկողինը) և վրան փոռմ հողզորը. սրա վերևի մասը լայն է, իսկ ցածը՝ նեղ, հողզորի վրայ գնում են թէչորը, ապա փոռմ են մի ուրիշ մնծ չոր և վրան ածում մօտաւորապէս կէս լիոր մազած հող դրամից յետոյ երեխան պակեցնում են և հոդի մի մասը լցնում նրա գոզը, որպէս զի թարմ մարմինը չխաչի: Ապա մի ուրիշ փափուկ չոր են գնում երեխայի կը բրունկների տակը և ծայրերը ծալում ծնկների վրայ: Այսուհետև երեխայի թէերը կողքերին զնելով հողզորով ու թէչորով պինդ փաթաթում և մի զոյգ կապանիներով (մէկը կրծքի, միւսը ծնկի վրայով) կապում, յետոյ փորալընէրը (վերմակը) ձգում և մի ծածուկ (ծածկոց, քաշում օրօրոցի վրայ, որպէս զի երեխան ճանճերից ու մոծակներից ազատ մնայ, և սկսում են օրօրել:

Ալիորիքին. — Զահարմանալում ամուլ կինը թէն նախաստինքի չի ենթարկում, բայց նա իրեն շտա զդբախտն է համարում, և որպէս զի երեխայ ունենայ՝ դիմում է զանազան միջոցներ: զիր է բաց անել տալիս կամ «չըլլապար» (ծննդի վրայ մանացած) կնոջ զիրեզմանի շուրջը պատում է և գերեզմանանող ածում մէջքին և կամ ցիառը ընդպատաշին զալուած խարոյիկ մոխրից ածում է մէջքին: Եթե այս միջոցները չեն օգնում՝ սրբերի օգնութիւնն է հայցում, ուսորոցիկ ուլիսի է զնում, մատաղ կտրում, մոմ վառում, ծնկալոր և արտասուալից աղօթում, զիմին աւետարան է կարգավ տալիս և այլն:

Անուններ. — Ընդհանրապէս երեխայի անուն զնում է զերպասանի մնծը կամ հայրը: Աղորակիկ երեխային մնծ հօր անունն են գնում, որպէս զի նրա յիշասակը միշտ վառ մնայ:

Գիւղազները յաճախ կրմանում են անունները: Ահա գործածակն անուններն իրենց կըրճատութիւններով, յաւելութիւններով և հնչիւններով.

ՏՊԱՄԱՐԴԿԱՆՑ

Արգար - Ապկար.

Արքահամ - Ապրամ.

Ակրսամզը-Ակրսամ, Էլլրսամ.

Ամովսիս - Ամօվսի.

Ամտօմ - Ամլոմ.

Ասարել - Ապոաքի.

Աստուածաւոր - Ասծսաւոր, Շատուր:

Արքատակիչո - Արքատակ.
Արշալոյս - Ալոյսուս.
Անհմբ - Ա Եմիկի, Արուդի.
Բարպեղմէնու - Բարթէլմէնու
Բարսին - Բասուլի.
Բեթամիթ - Բեթմիկ.
Գարբիէ - Գափուէլ.
Գալստան - Գալուստ.
Հէռոր - Գիորգ.
Գրիգոր - Գրիգոր, Գօգոլ.
Դամիլի - Դամիլէ.
Դատիմ - Դատութ.
Եղիշ - Եղիշու.
Խասազար - Խզմազար.
Ենոփր - Ենօթօք.
Զարուիթա - Զափար.
Զօնքրա - Զօնքրա.
Ուժի զավկի - Ուժջուլ.
Թաղուս - Թաղուլ.
Թովմաս - Թումաս.
Խառակ - Սահակ.
Լևօթ - Լէօթ.
Խառատուր - Խէշաղուր.
Խայիկ - Խէչիկ.
Կարապետ - Գուսիխ, Գտամ.
Համբարձում - Համբարց.
Հայրապետ - Հէքրապետ.
Հազարու - Հազար.
Հուկաս - Հուկաս.
Խնանդ - Հէւանդ.
Մաթուսազար - Մաթսազա.
Սաղարիչա - Մաղար.
Սատաթ - Սաթի.
Սատթէնու - Սաթէվու, Մաթ
Մաթուլ.
Մարգար - Մարգար - Մակար
Մարտիրոս - Մարտիրոս, Մալո
Մերուպ - Մօրոփ.
Միքայէլ - Մուֆէլ.
Մկրտիչ - Մուկրու.
Սկրութ - Մզրգում.
Մոլէսու - Մօնէսու.
Մակոր - Ակոր.
Ցարութիթ - Ցարթութ.
Եղակիթ - Օվարիթ.
Եղիթմանէս - Օվիթէս, Օվիիզ.
Եղուէփ - Շուտէփ.
Եղորդաման - Վորթաման.
Նախապիտ - Նըմապիտ.
Ներկւս - Նէրսէս.
Նիկոլայուս - Նիկոլուս.
Փայուռու - Փայուռ.

Ըստայէլ - Ըստէլ.
Ըէթէոռ - Ըէթէւլոս, Նէթոու.
Սամէլ - Սամէլ.
Սարգիս - Սարգիս.
Սիրակ - Սիրակ.
Միմէօթ - Միմէօթ, Միմէօթ.
Մտեփամ - Տլէփամոս.
Վարամ - Վարամ.
Վարդամ - Վարդամ, Վայրթամ.
Վրթամէս - Վարթամէս.

ԿԱՆ ԱՆ 8

Ամմա - Ամմայի.
Ամմախաթութ.
Աշխէթ.
Արեգմազամ - Արեգ.
Ասամէթ.
Արուսիսակ - Արուսազ.
Աստղիկ.
Բալասամ.
Բէզզադ - Բէզզի, Բէզզազա.
Գարսամա.
Գուրբարած - Գուրբընար.
Գուրլումիմա.
Գիլմազ - Գուլմազ.
Գուլիմար.
Գուլմարաթ.
Գիշխութ.
Գոյաթ.
Եթար.
Եղիսաբէթ - Եղիսաբէտ, Եղիսա
պէտ.
Եղիսա.
Զարթար.
Զմրութ.
Էլիմա.
Քացուհի - Քացույի.
Թէլաւ.
Թագագալու - Թամամ.
Թէլթէլ.
Խշխաթ.
Խշխաթունի.
Խրիսիմա - Խրիս.
Խսկունի.
Լուիզա.
Լուկիա.
Լուսիկ.
Խաթայի.
Խաթութ.
Խամփէլքի - Խամփի.